



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը Լ**

---

**ԱՆՌԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երեւան

2 դեկտեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի  
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի  
Ֆ. Թոփյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Շավարշ Մկրտչյանի եւ այլոց անհագական դիմումով  
գործը քննության ընդունելու մասին հարցը,

**ՊԱՐՋԵՑ.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Շավարշ Մկրտչյանը եւ այլոք 2011թ. նոյեմբերի 16-ին դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի, «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օրարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի, 16-րդ հոդվածի 1-ին մասի համապարասիանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես՝ վերջինիս 1-ին, 3-րդ, 6-րդ, 8-րդ եւ 31-րդ հոդվածների պահանջներին:

Դիմողները պնդում են, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումն այն մասին, որ մաքնանշված հոդվածով նախագեսպած ընդհանուր համարեղ սեփականության գույքը փնօրինելու պարագայում գործում է համասեփականագերերի համաձայնության եւ դրա փնօրինման իրավունքի առկայության կանխավարկածը՝ հակասում է ՀՀ Սահմանադրության 31-րդ

հոդվածին, քանզի վերջինս երաշխավորում է սեփականության իրավունքով սեփականագիրոջը պարկանող գույքը փնօրինելու իրավունքը, ինչը ենթադրում է գույքի փնօրինման իրավունք, բացառապես գույքի սեփականագիրոջ կամ բոլոր սեփականագիրերի միանշանակ համաձայնություն:

1. «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օբարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի եւ 16-րդ հոդվածի 1-ին մասի կապակցությամբ՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սույն անհագական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ հետեւյալ պարբռառաբանությամբ.

«Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ եւ 7-րդ մասերին համապատասխան՝ սույն անհագական դիմումն ակնհայտ անհիմն է՝ այնքանով, որքանով դիմողները բավարար ու անհրաժեշտ իրավաբանական փաստարկներով եւ եզրահանգումներով պարզած կերպով չեն հիմնավորել սահմանադրախրավական վեճի առարկա հանդիսացող իրավադրույթների՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու հանգամանքը, ավելին՝ նրանց հիմնավորումները կրում են բացառապես ձեւական բնույթ եւ ուղղված են այդ դրույթների կիրառման իրավաչափության հարցին: Դիմողները, ըստ էության, ձեւականորեն վիճարկելով վերոհիշյալ իրավանորմերի սահմանադրականությունը՝ իրականում բարձրացնում են նշված նորմերի կիրառման իրավաչափության հարց: Մաքնանշված դրույթներն իրենց բովանդակային իմաստով սահմանադրախրավական վեճ չեն հարուցում: Փաստորեն, դիմոդները փորձել են դադարական ակտերի իրավական հետեւանքները վերագրել իննդրու առարկա իրավանորմերի սահմանադրականության խնդրին: Անհրաժեշտ է արձանագրել նաեւ, որ դիմոդներն իրավաբանորեն չեն հիմնավորել վիճարկվող օրինադրույթների եւ իրենց իրավունքների խախտման փաստի միջեւ առկա պարբռահետեւանքային կապը ՀՀ սահմանադրական դադարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՆ-21 աշխարհակարգային որոշման 8-րդ եւ 9-րդ կետերի:

Ասվածը վկայում է, որ վերոհիշյալ իրավանորմերի մասով անհագական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ դիմումի ակնհայտ անհիմն լինելու եւ դիմոդների կողմից վիճարկվող դրույթների կիրառման իրավաչափության հարց բարձրացնելու կապակցությամբ:

2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի առումով՝ սույն անհագական դիմումի քննությունը մերժելու՝ օրենքով սահմանված հիմքերը բացակայում են, քանի որ դիմոդների կողմից պահպանվել են սահմանադրական դադարան դիմելու համար օրենքով սահմանված ընդունելիության բոլոր պայմանները:

Դիմողները միջնորդություն են ներկայացրել քննության առարկա գործով պետական փուրքի վճարումից ազաքելու կամ հետաձգելու մասին՝ վկայակոչելով իրենց գույքային դրությունը:

Ելնելով վերոգրյալից եւ դեկավարվելով «Սահմանադրական դարպարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դարպարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դարպարանի թիվ 2 դարպական կազմը

AFFAIRS.

1. Քաղաքացի Շավարշ Մկրտչյանի եւ այլոց անհագական դիմումով գործը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասի մասով ընդունել քննության:
  2. Սույն գործով դադարապահությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:
  3. Տվյալ անհագական դիմումով գործի քննության ընդունումը՝ «Հասարակության եւ պետքության կարիքների համար սեփականության օպարտման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի, 16-րդ հոդվածի 1-ին մասի մասով մերժել:
  4. Դիմողներին ազագել ՀՀ սահմանադրական դադարան դիմելու համար օրենքով սահմանված պետքական բուրքի վճարումից:

## Նախազահող՝

Անդամներ



2 դեկտեմբերի 2011 թվականի  
ՍԴԸԿՈ/2-16